

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ФИЗИОЛОГИИ ИМ. АКАД. Л. А. ОРБЕЛИ

L. A. ORBELI INSTITUTE OF PHYSIOLOGY,
NATIONAL ACADEMY OF SCIENCES, REPUBLIC OF ARMENIA

0028, Երևան, Օրբելի նրբ. փող. 22
0028, Ереван, ул. Бр. Орбели 22

Phone: (374 10) 272247
Fax: (374 10) 272247
e.mail: info@physiol.sci.am

Orbeli Bros. str. 22
Yerevan, 0028

2471-69
13.08.2018

Փաստաթղթի ԱՇՈՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ
/ՀՀ, ք.Երևան, Արեւիկայի 6/1/

ՀԱԳԵԼԻ ՊԱՐՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ուղարկում ենք Ձեզ ՀՀ ԳԱԱ Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտի ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի զտման, սերտիֆիկացման և ստանդարտացման լաբորատորիայի վարիչ, տոկսիկոլոգ, կ.գ.թ., Արմեն Ոսկանյանի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում մասնագիտական եզրակացությունը, համաձայն 06.08.2018թ.-ին Ձեր կազմակերպության հետ կնքված պայմանագրի:

Առդիր 8 թերթ

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ
ՏՆՕՐԵՆ, Կ. Գ. Դ., ՆԱԻՐԱ ԱՅՎԱԶՅԱՆ



ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փաստաբան Աշոտ Աբրահամյանը դիմել էր դիմումով, հայտնելով հետևյալը՝ որ իր վստահորդ Ռաֆիկ Լիպարիտի Վիրաբյանն Եղվարդ քաղաքի Երևանյան խճուղու մոտակայքում իրեն սեփականության իրավունքով պատկանող մոտ 54000քառ.մ գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողատարածքում հիմնել է պտղատու այգի, ինչպես նաև նույն տարածքում հիմնել է չրանոց և Ռիվալ ՄՊԸ-ի միջոցով մի քանի տարի շարունակ զբաղվում է սննդամթերքի մասնավորապես էկոլոգիապես մաքուր չրերի արտադրությամբ, որի հումքը հանդիսանում է վերը նշված այգուց ստացվող պտուղները, իսկ նշված գործունեությունը ընդլայնվում է, ոչ միայն Ռաֆիկ Լիպարիտի Վիրաբյանի կողմից, այլ անմիջապես հարևանությամբ գտնվող հողատարածքների սեփականատերերի կողմից հիմնված այգիներով:

2017-2018 թվականների ընթացքում «ԱՐՄՕՅԼ» ՓԲԸ-ն Եղվարդ քաղաքի Երևանյան խճուղու 129-րդ հասցեում, գտնվող հողատարածքում սկսել է կառուցել և արդեն ավարտին է հասցրել նավթամթերքի վերամշակման գործարանի կառուցումը, ընդգրկելով հարևանությամբ գտնվող հողատարածքները, անցկացվող գազատարը, որը վկայում է ծավալուն գործունեություն իրականացնելու մասին:

«ԱՐՄՕՅԼ» ՓԲԸ-ի կողմից կառուցված նավթավերամշակման գործարանը անմիջապես սահմանակից է Ռաֆիկ Լիպարիտի Վիրաբյանին սեփականության իրավունքով պատկանող մոտ 54000քառ.մ պտղատու այգուն, որը անհնգստություն է առաջացրել Եղվարդ քաղաքի Նատի թաղամասում բնակվող բնակիչներին, այդ թվում Ռաֆիկ Լիպարիտի Վիրաբյանի, ինչպես նաև տարածքում գործունեություն իրականացնող անձանց շրջանում:

Համաձայն «ԱՐՄՕՅԼ» ՓԲԸ-ի տնօրենի և նրա ներկայացուցիչների կողմից կատարված հայտարարությունների կառուցվող գործարանում իրականացվելու է քսայուղերի և բիտումի արտադրություն, իսկ արդեն իսկ ավարտին հասցված գործարանը շատ մոտ (30մ հեռավորության վրա) է գտնվում Եղվարդ քաղաքի Նատի թաղամասի բնակելի տներին և պտղատու այգիներին:

Ըստ «ԱՐՄՕՅԼ» ՓԲԸ-ի տնօրեն Ալֆրեդ Աբեղի, «ԱՐՄՕՅԼ» ՓԲԸ-ն իրականացնելու է յուղերի և բիտումի արտադրություն և վերամշակման գործընթացում կիրառվելու են հետևյալ տեխնոլոգիաները՝

Բիտումի արտադրության համար մեջբերում եմ՝ «Ամենասխալը արտադրման ձևը մագուրից բիտում ստանալն է: Այն, ինչ որ տեսնում եք Հայաստանի ճանապարհներին, մագուրից ստացված բիտումն է, որը ձգողականություն չունի, այդ պատճառով էլ անձրևների ժամանակ ասֆալտը քանդվում է: Մենք բիտումը ստանալու ենք VB-ից (Vacuum Bottom), որի արտադրությունը կայանալու է

կոմպրեսորային բարձր ճնշման տակ: Եթե ես ներկրում եմ 10 հազար տոննա հումք, ապա ստանալու եմ 10 հազար տոննա ապրանք: Այսինքն՝ թափոններ չեն լինելու»:

Յուդի արտադրության համար մեջբերում եմ՝ «Բազմիցս հայտարարել ենք՝ մեզ մոտ լինելու է կանաչ արտադրություն: Նավթավերամշակում բառը սխալ է, լինելու է քսայուղերի արտադրություն: Մենք ոչ թափոն ունենք, ոչ էլ՝ արտանետում: Իսկ ինչ արտանետում էլ, որ կա, շատ բարձր ջերմաստիճանի տակ այրվում են»:

Ըստ մամուլի տեղեկությունների տարեկան կտրվածքով ներկրվելու է յուդի արտադրության համար 50.000,0 տոննա հումք, իսկ բիտումի արտադրության համար 60.000,0 տոննա հումք:

Ելնելով վերը նշված փաստերից, խնդրել էր տալ պատասխաններ հետևյալ հարցերին՝

1.VB (Vacuum Bottom) տեխնոլոգիայի կիրառման ընթացքում, ինչ տեսակի հումք կարող է ծառայել բիտումի արտադրության համար: Տվյալ տեխնոլոգիայի կիրառմամբ արտադրությունը կազմակերպելու ընթացքում ինչ տեսակի նյութերի արտանետումներ կարող է տեղի ունենալ և ինչ, ազդեցություն կարող է ունենալ շրջակա միջավայրի վրա, մասնավորապես հարևանությամբ գործող գործարանում աշխատող մարդկանց առողջության և պտղատու այգիների (ծառի և նրա պտղի), չրի արտադրությունների վրա, իսկ եթե ազդեցություն է ունենալու ապա ինչով է դա արտահայտվում և նման պայմաններում բնակելի թաղամասերից և պտղատու այգիներից, չրի արտադրություններից, ինչ հեռավորության վրա պետք է գտնվի բիտում արտադրող նավթավերամշակման գործարանը և ՀՀ գործող նորմատիվային ակտերով դա նախատեսված է, թե ոչ:


2.Տարբեր տեսակի քսայուղերի խառնման հետևանքով, տարբեր մակնիշի քսայուղեր ստանալու դեպքում ինչ տեսակի նյութերի արտանետումներ կարող է տեղի ունենալ և ինչ, ազդեցություն կարող է ունենալ շրջակա միջավայրի վրա, մասնավորապես հարևանությամբ գործող գործարանում աշխատող մարդկանց առողջության և պտղատու այգիների (ծառի և նրա պտղի), չրի արտադրությունների վրա, իսկ եթե ազդեցություն է ունենալու ապա ինչով է դա արտահայտվում և նման պայմաններում բնակելի թաղամասերից և պտղատու այգիներից, չրի արտադրություններից, ինչ հեռավորության վրա պետք է գտնվի քսայուղերից տարբեր տեսակի քսայուղեր արտադրող նավթավերամշակման գործարանը և ՀՀ գործող նորմատիվային ակտերով դա նախատեսված է, թե ոչ:

Այդ դիմումը, ներկայացված նյութերը փոխանցվել են Ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի և թույների լաբորատորիայի վարիչ, կ.գ.թ., պրն Արմեն Ոսկանյանին, որն ուսումնասիրելով տրված հարցադրումները տվել է մասնագիտական եզրակացություններ, որը բերված է ստորև՝

Վերլուծություն
նախատեսվող արտադրության և օգտագործվող հումքի վնասակարության
վերաբերյալ

Հայտնի փաստ է, որ նաֆթի կամ նաֆթամթերքի վերամշակումը միշտ զուգորդվում է ն մարդու և բնության վրա բացասական ազդեցության հետ: Վնասակար ազդեցությունը առկա է նաֆթամթերքի վերամշակման բոլոր փուլերի համար:

Գիտական վերլուծության համար ներկայացված օգտագործելիք հումքը հանդիսանում է նաֆթամթերք պարունակող զանգված, որը կոչվում է նավթի վակուումային թորման մնացորդ (vacuum bottom residue, կամ ուղղակի՝ vacuum bottom): Ներքևում բերված է Vacuum Bottom -ի, կամ հետագայում VB-ի հատկությունները և որոշ բաղադրիչների տոկոսային քանակը՝ նայիր նկար 1-ը և աղյուսակ 1-ը.



Նկար 1. Vacuum bottom residue, կամ ուղղակի՝ vacuum bottom տեխնոլոգիայի սխեմատիկ պատկերը:

Վակուումային թորման միջոցով ստացված բիտումները, իբրև նաֆթամշակման մնացորդների վերջին արգասիք, մաքսիմալ հազեցած են ծծումբով, վանադիումով և այլ վնասակար նյութերով:

Վակուումային նստվածքի (Vacuum bottom) բնութագիրը			
բնոր.	թեստ	միավոր	արդյունք
1	խտություն	գ/մլ	0.9937
2	ծակմ. մածուցիկ. 50 °C	CST	2289.84
3	ծակմ. մածուցիկ. 100 °C	CST	105
4	բոցակետ	°C	≥86
5	հոսակետ	°C	≥24
6	ընհանուր ծծումբ	%, ըստ քաշի	3.88
7	ջուր և նստվածք	%, ըստ ծավալի	1.5
8	ջրի պարունակությունը	%, ըստ ծավալի	0.4
9	վանադիումի պարունակ.	մաս/միլիոնի	204

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից VB-ում որոշ նյութերի պարունակությունը շատ մեծ է /օրինակ ծծմբի կամ վանադիումի/, որոնք վերջի վերջո արտանետվելու են արտաքին միջավայր: Ինչքան ավելի մաքուր յուղեր արտադրվեն, այնքան ավելի շատ ծծումբ կհայտնվի արտանետումների մեջ: Միջազգային պահանջները ծծումբի արտանետումների նկատմամբ շատ խիստ են:

Վնասակար նյութեր են առաջանում նաև բիտումի և բիտումային մաստիկայի հալեցման ժամանակ: Իսկ այրման ժամանակ առաջացած վնասակար նյութերի ՄԹԿ մգ/խոր. մետրում՝

Ազոտի օքսիդներ (վերահաշվարկված NO₂) 5

Ծծումբի անհիդրիդ 10

Ածխաթթու գազ 20

և այլն:

Ապացուցողական բժշկության տվյալներով ցույց է տրված, որ՝

-բիտուրը և գուդրոնը կարող են առաջացնել մաշկային զանազան հիվանդություններ

-լուծիչները՝ հրդեհավտանգեն և ազդում են շնչառական ուղիների, տեսողության, մաշկի և աղեստամոքսային տրակտի վրա:

Նշենք այն փաստը, որ այսօր արդեն անհրաժեշտ է ունենալ բոլոր վերոհիշյալ նյութերի ֆոնային կոնցենտրացիայի չափման տվյալները, կատարված համապատասխան մարմինների կողմից հետագա մոնիտորինգի համար:

Վերլուծություն՝

նախատեսվող արտադրության Սանիտարական-Պաշտպանիչ Գոտու հաշվարկի, շրջակա բնակելի տարածքների և պտղատու այգիների միջև հաշվարկվող հեռավորության վերաբերյալ

Ինչ վերաբերվում է նշված արտադրության տեղակայմանը և հեռավորությանը բնակելի զանգվածներից, պտղատու այգիներից և սնունդի արտադրությանը /մասնավորապես-չիր/, ապա դրա վերաբերյալ կան հստակ փաստաթղթեր, այն է՝ ՍանՊիՆը:

Սանիտարական-Պաշտպանիչ Գոտի

Սանիտարական-Պաշտպանիչ Գոտին ցանկացած այնպիսի օբյեկտների անհրաժեշտ պարագան է, որոնք կարող են հանդիսանալ շրջակա միջավայրի կամ մարդկանց առողջության վրա քիմիական, կենսաբանական կամ ֆիզիկական ազդեցության աղբյուր:

Սանիտարական-Պաշտպանիչ Գոտում և արտադրահրապարակների տարածքում արգելվում է տեղադրել սննդի արտադրության հիմնարկներ, սննդի պահեստներ, խմելու ջրերի և հյուսթերի պահեստներ և այլն: Սանիտարական-Պաշտպանիչ Գոտում արգելվում է տեղադրել մարդկանց կացարաններ:

Եթե գոյություն ունեն ավելի քան մեկ արտանետող աղբյուր, /որը կազմում է արտանետումների 30 տոկոսից ավելին/, ապա Սանիտարական-Պաշտպանիչ Գոտին ահմանվում է սկսած արտադրական հիմնարկի սահմաններից:

Մասնավորապես, այն արտադրությունը, որը նախատեսվում է իրականացնել «ԱՐՄՕՅԼ» ՓԲԸ-ի կողմից, կանոնակարգվում է հետևյալ փաստաթղթով՝ /ՍանՊԻՆ 2.2.1/2.1.1.1200-03, (վերջին փոփոխությունը 9 սեպտեմբերի 2010 թ.)/

Անդրադառնալով նշված փաստաթղթում բերված տվյալներին, նշենք, որ Սանիտարական-Պաշտպանիչ Գոտին դասակարգվում է հետևյալ կերպ՝

- արտադրական օբյեկտներ և արտադրություն 1 դասի՝ - 1000 մ;
- արտադրական օբյեկտներ և արտադրություն 2 դասի՝ - 500 մ;
- արտադրական օբյեկտներ և արտադրություն 3 դասի՝ - 300 մ;
- արտադրական օբյեկտներ և արտադրություն 4 դասի՝ - 100 մ;
- արտադրական օբյեկտներ և արտադրություն 5 դասի՝ - 50 մ;

Անդրադառնալով ՍանՊԻՆ-ի 7.1 կետին՝

7.1. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ և ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

7.1.1. Քիմիական ՕԲՅԵԿՏՆԵՐ և ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Դաս I - Սանիտարական-Պաշտպանիչ Գոտի՝ 1000 մ.

Կետ 32. Բիտումի և այլ նաֆթամթերքների թորման մնացորդներից գանազան մթերքների արտադրություն:

Եթե ածխաջրածնային հումքի մեջ պարունակվում է ավելին, քան 1 տոկոս ծծումբ, ապա Սանիտարական-Պաշտպանիչ Գոտիմ պետք է հիմնավորված կերպով մեծացվի:

Այսպիսով հասկանալի է, որ նշված տիպի արտադրությունը պետք է տեղակայվի ցանկացած բնակելի շինություններից կամ պտղատու այգիներից մինիմալը 1000 մետր հեռավորության վրա, որտեղ ի դեպ չի ընդգրկվում բաժանող ճանապարհ և վտանգների մեջ է ներառնվում մեքենաների արտանետումները նույնպես:

Հավելյալ տվյալներ, որոնք անհրաժեշտ են հաշվի առնման նաֆթամթերքի վերամշակման ժամանակ՝ հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել քամու ուղղությանը նշված տարածքում: Եթե քամիների վարդը անբարենպաստ է բնակչության կամ պտղատու այգիների համար, ապա հեռավորությունը պետք է ավելացվի:

Եթե Սանիտարական-Պաշտպանիչ Գոտում առկա է երթևեկություն, ապա մեքենաների արտանետումները գումարվում են օբյեկտի արտանետումներին:

Հանրային լուսամների վերլուծություն

«ԱՐՄՕՅԼ» ՓԲԸ-ի կողմից Եղվարդ համայնքում առաջին Հանրային լուսամների տեսագրության վերլուծության ընթացքում նկատվում է, որոշ հակասական տվյալներ և փաստարկներ, օրինակ՝ 32.54 րոպեին ասվում է, որ «նույնիսկ ջրից չենք օգտվում», իսկ 1.38.54 –ն ասվում է «ջրահեռացման» մասին: 39.59 րոպեին «ԱՐՄՕՅԼ» ՓԲԸ-ի ղեկավարը ընդունում է, որ խոսքը գնում է «նաֆթամթերքի վերամշակման գործարանի» մասին, հետո հերքում: Այստեղ 1.18.00 նշվում է, որ «1952 թվին ընդունվել է, որ սանիտարական գոտին պետք է կազմի 300 մետր», այնինչ ըստ ՍանՊԻՆԻ /ՍանՊԻՆ 2.2.1/2.1.1.1200-03, (վերջին փոփոխությունը 9 սեպտեմբերի 2010 թ.) քիմիական օբյեկտների և արտադրություն -դաս 1/ դաս 1 արտադրություն համար նախատեսված է 1000 մետր հեռավորություն բնակելի շինություններից և պտղատու այգիներից: 43.34–ն րոպեին ասվում է, որ թափոն և արտանետում չկա, իսկ 1.35.03 –ին՝ որ «մնացորդը գոլորշացնում ենք, էթումա», որը անմիջականորեն հանդիսանում է արտանետում: Նաև հասկանալի է, թե ինչ նյութեր են արտանետվում և ինչին կարող է բերել մի փոքր թերայրումը:

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախնական վերլուծության /քանի որ, առկա չկան կոնկրետ տվյալներ/ համաձայն կատարված է միանշանակ եզրակացություն, որ այն արտադրությունը, որը նախատեսվում է իրականացնել «ԱՐՄՕՅԼ» ՓԲԸ-ի կամ որևիցե այլ ընկերության կողմից, որոնք ցանկանում են զբաղվել նաֆթամթերքի վերամշակումով Հայաստանի Հանրապետությունում, արդի պայմաններում պետք է խստիվ արգելվի մինչև մանրակրկիտ և լուրջ ուսումնասիրություն կատարելը: Կա անհրաժեշտություն, որ այս տիպի արտադրություն իրականացնելու թույլտվությունը տրվի ՀՀ կառավարության կողմից, որին պետք է ընդգրկվեն ՀՀ բնապահպանության նախարարությունը և այլ գերատեսչական մարմիններ:

Վերլուծությունը կատարեց ՀՀ ԳԱԱ Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի
ինստիտուտի ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի զտման, սերտիֆիկացման և
ստանդարտացման լաբորատորիայի վարիչ, տոկսիկոլոգ, կ. գ. թ.,

Արմեն Ոսկանյանը

Արմեն Ոսկանյանի մասնագիտական վերլուծության տեքստի ինքնությունը
հավաստում եմ՝ ՀՀ ԳԱԱ Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն,
Կ. գ. դ.,

Նաիրա Այվազյան

